«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ HAYCERT «HAYCERT» LLC

ք. Երևան, Նորք Մարաշ, Սարգիս Բաղդասարյան փող. տուն 14, Հեռ. +374-94107701 E-mail: haycert@haycert.am
Sargis Baghdasaryan str., bld. 14, Nork Marash, Yerevan, Armenia Tel. +374-94107701

Տեղեկատվություն սերտիֆիկացման որոշման մասին

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի սերտիֆիկացման մարմինը լիազորված է որոշումներ ընդունել սերտիֆիկացման վերաբերյալ և պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար: Հայտատուի ներկայացված արտադրանքի սերտիֆիկացման հայտի համաձայն իրականացված աշխատանքների, մասնավորապես՝ գնահատման, դրա արդյունքների վերլուծության/ստուգման, ինչպես նաև ուղեկից տեղեկատվության հիման վրա սերտիֆիկացման մարմնի փորձագետը՝ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի ղեկավարի հետ համատեղ, ընդունում է սերտիֆիկացման մասին որոշումը:

Այն դեպքերում, երբ արտադրանքի սերտիֆիկացման մասին ընդունվում է բացասական որոշում, սերտիֆիկացման մարմինը տեղեկացնում է դրա վերաբերյալ հայտատուին՝ նշելով այդ որոշումը հիմնավորող պատճառները: Եթե հայտատուն հետաքրքություն է արտահայտում շարունակել սերտիֆիկացման գործընթացը, ապա սերտիֆիկացման մարմինը կարող է վերսկսել գործընթացի գնահատման իրականացման փուլից:

Սերտիֆիկացման մարմինը արտադրանքի սերտիֆիկացման վերաբերյալ դրական որոշման ընդունման դեպքում հայտատուին հանձնում է համապատասխանության սերտիֆիկատ՝ սերիական թողարկվող արտադրանքի, արտադրանքի խմբաքանակի կամ եզակի արտադրանքի համար: Սերտիֆիկատում նշվում է հետևյալը.

- Սերտիֆիկացման մարմնի անվանումը և հասցեն,
- Սերտիֆիկացման ենթակա արտադրանքի անվանումը,
- Համապատասխանության սերտիֆիկատի համարը,
- Սերտիֆիկատի շնորհման և գործողության ավարտի ամսաթիվը, գործողության ժամկետը,
- Պատվիրատուի անվանումը և հասցեն,
- Սերտիֆիկացման ոլորտը, ներառյալ՝ ստանդարտների կամ ՍՓ-երի անվանումը, որոնցով հավաստվում է համապատասխանությունը,
- Սերտիֆիկացման սխեմայով նախատեսվող լրացուցիչ տեղեկատվություն,
- Սերտիֆիկացման մարմնի լիազոր անձի ստորագրությունը և սերտիֆիկացման մարմնի կնիքը:

Հայտատուին համապատասխանության սերտիֆիկատը շնորհվում է սերտիֆիկացման գործընթացի բոլոր պահանջների կատարումից հետո:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մարտիրոսյան

30.06.2025թ